

Արագության տատանումը`

Արագությունների մաքսիմալ տատանումը կազմում է 20 %:

Առավել բարձր տատանում նկատելու դեպքում կարող եք դիմել մեր հեռախոսային սպասարկման կենտրոն` 060 44 44 44 համարով:

Ծառայությունների ակտիվացման ժամանակահատված`

Եթե Դուք ցանկանում եք դառնալ U!com բաժանորդ, Դուք կարող եք գրանցվել մեր կայքում կամ սպասարկման կենտրոններից մեկում, և առավելագույնը 15 (տասնհինգ) օրվա ընթացքում լրացուցիչ խնդիրներ չառաջանալու դեպքում Դուք կունենաք Ucom ծառայությունները Ձեր տանը:

Ծառայության որակի մասին հաճախորդների բողոքներին արձագանքելու ժամանակահատված`

1. Հեռախոսագանգի միջոցով բողոք արձանագրելու դեպքում` անմիջապես օպերատորի կողմից, իսկ հեռախոսագծերի առավելագույն ծանրաբեռնվածության դեպքում ոչ ուշ, քան 24 (քսանչորս) ժամվա ընթացքում.

2. Էլեկտրոնային փոստի կամ գրավոր նամակով բողոք ներկայացնելու դեպքում` հնարավորինս կարճ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդհատված ծառայության վերականգնման (պատշաճ որակի վերականգնման) համար անհրաժեշտ ժամանակահատված`

1. Բողոք/ահագանգը ստանալուց հետո հնարավորինս սեղմ ժամկետներում (որպես կանոն 1 (մեկ) օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 5 (հինգ) օրվա ընթացքում.

2. Ֆորս-մաժորային իրավիճակների և վթարների հետևանքով Ընկերության ցանցի զգալի տեխնիկական խնդիրների առաջացման, ինչպես նաև այն դեպքերում, երբ ծառայության բացակայությունը կապված չէ Ընկերության հետ (օր.` եթե դրա պատճառը այլ օպերատորների ցանցերն են), ժամկետը կարող է ավելի երկար լինել, բայց ոչ ավել, քան 3 (երեք) աշխատանքային օր: